

Նկարչի տեխնիկան բարձր է և իւրատեսակ. գոյները նուրբ են և բարակ թըսուած, կարծես լուսած՝ մազազաթի վերայ. ափսոս, որ խորանների մի մասը թօշնած է; վատ պահուած լինելու պատճառով: Նորա սիրած գոյների մէջ ամենից աւելի աչքի է ընկնում մոյզ կապոյտը՝ լաճուարդը, որ գործադրում է աւետարանիչների պատկերների կամար իրրե Ֆոն, այլ եւ բուսական զարդարանքների, խորանների շրջանակազարդերի մէջ: Բիւզանդական և մեր կիլիկեան շրջանի կամար այնքան սիրուած սակի Ֆոնը վտարուած է մեր նկարչի գործերի մէջ. սակի գործադրում գծերի կամար միւս գոյների կետ, յաճախ կարմրի, որ առանձին ազնուութիւն է տալիս նրանց, և նիւթուանների կամար, բայց փոշուկի և ոչ երբեք թերթուսիկ: Կապոյտից յետոյ կանաչն է աւելի շատ գործադրութիւն ստացած. ձօնի մանրանկարի Ֆօնը մութ կանաչ է, բուսական մեծ չափով գործադրուած է նաև խորանազարդերի, սիւնների և բուսական օրնամենտաքիւռի մէջ: Կարմիրը որ մանրանկարչութեան ամենից բնորոշ գոյնն է, կամեմատաբար քիչ է գործադրուած, մեծ մասով գծերի և եզերազարդերի կամար: Գործադրուած են նաև սևն ու դեղինը. առաջինը կերպական մեծ մանրանկարների շքեղանկազարդերի և դէմքը բնորոշող գծերի կամար, իսկ երկրորդը՝ սիւնների, նաև նիւթուանների կամար, ինչպէս Սրուսաղէմ մշտնելու մանրանկարի մէջ, Յիսուսի և Պետրոսի կամար: Գրչով կատարուած զարդարանքները սև են, ինչպէս Մատթէոսի շքեղանկան է:

ԴԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎԱՆՓԵԱՆ



Դեկտեմբեր 1933
Եշվիածիքի



ԵՐԱԺՅՏԱԳԻՏԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳ

Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն գարձաւ չորրորդ դարի ըսկըզրին. առաջին քահանաները յոյն և ասորի էին և կատարում էին ժամերգութիւնը յունարէն և ասորերէն լեզուներով մօտ 150 տարի անընդհատ: Ենչտեսնք հենց սկզբից, որ սրանց կետ մտնում էր փատորէն բիւզանդական-ասորական ույն եկեղեցական երաժշտական կուլտուրան, որը իշխող էր մինչև 10րդ դարը թէ՛ արևմուտքում և թէ՛ արևելքում, իսկ 10րդ դարուց յետոյ արևելքի շատ երկրներում նոյն իսկ մինչև մեր օրերը:

Միայն 5րդ դարի առաջին կեսում, երբ հայ պարութեան ու գրականութեան հիմքը գրեց, արդէն ժամերգութիւնը ըսկուտում են կատարել կայիւրէն լեզուով: Կորիւն և Ագաթանգեղոս յաճախ յիշատակութիւններին: Սրանք երգում էին թէ՛ պատարագի ժամանակ և թէ՛ ամէն ըրպէ՛ երբ կամենային: Ղազար Փարպեցիի Սահակ տեսիլքում յիշում է ՁՍուրբ աստուածածի մատին, իսկ Սերէոսը՝ օՓառք ի բարձուանսի:

Արարական տիրապետութեան շրջանում ծաղկում են հայոց վանքերը, որ և կենտրոնանում, զարգանում են միջնադարեան գիտութիւնն ու արուեստը, այդտեղ է սկզբնական կամայնական երգից ծաղկել ու զարգացել նաև մեր ներկայ բուսականին կարուստ եկեղեցական երաժշտութիւնը՝ շարականը, ժամագիրքը, պատարագը, մեղեդիները, գանձերը, տաղերը, սոսիզները: Այդ և հետագայ շքեղանի երաժշտական կենտրոններից յայտնի են՝ Կաթողիկոսի, Նարեկի, Սլաճոսի, Կապուաքարի, Հնձուց, Դպրեվանքի, Յախացքարի, Ստեփաննոսի, Տանձոսի և վերջապէս Տաթևի վանքերը, որոնք սլցբիի յամբողջ երկրը անմասն երաժիշտներով:

Թէ՛ աւանդութիւնը և թէ՛ մատենագիրները բազմաթիւ անուններ են թւում՝ իբրև հեղինակ մեր եկեղեցական երաժշտութեան, ամէնից առաջ Սահակ և Մեսրոպ, որոնց՝ իբրև հայ դպրութեան հիմնադիրների, աւելի շատ բան են վերագրում, քան իրօք կարող էր լինել, Մովսէս Քերթոզ, Ստեփանոս Սիւնեցի, Յովնան Մանգակունի, Կոմիտաս կաթողիկոս, Սահակ Չորափորեցի, Օհան Օձնեցի, Պետրոս Գետադարձ, Գրիգոր Մազիստրոս, Գրիգոր վկայաւոր, Ներսէս Շնորհալի (12րդ դար), որի օրով վանական տաղաչափութիւնն է մտնում մեր հոգևոր բանաստեղծութեան մէջ, Ներսէս Լամբրոնայի, Գր. Սկեվաւցի, Խաչատուր Տարսնեցի, Յակոբ Կլայեցի և արևելիները:

Միջնագրում, մեր երաժշտական կեանքում երկու տեսական՝ բայց կենսական հարց է զբաղեցրել մեր նախնիներին՝ ա) գամմաների և բ) նոտագրութեան(²):

Գամմաների խնդիրը ըստ էութեան շատ մեծ նշանակութիւն ունէր, որովհետեւ դրա հետ կապուած էր կոմպոզիցիական որոշ սուսեղանների՝ եւ՛ սլսելու, եւ՛ վերջացնելու, եւ՛ կէս վերջաւորութիւնների, եւ՛ դիմող ձայնի, եւ՛ մեզոն (= միջին) ձայնի պայմանների կիրառումը: Մեր եկեղեցական ութը ձայնների վարդապետութիւնը մեր թէչարիտիկ ստեղծագործութիւնը չէ, այլ փոխ է առնուած բիզանդականից այն էլ ո՛չ միաժամանակ, ինչպէս աւանդութիւնն է թելագրում, այլ շտաբ բռն ձայններ վերցրել ենք զեռ ցրդ դարում՝ թրեւս Սահակի և Միսրոպի օրով, իսկ շտաբ կոմպերը (ρλααλλ), որոնք ճորջ դարուց առաջ ո՛չ մի եկեղեցում գոթութիւն չունէին, պիտի ներմուծուած լինեն՝ հաւանօրէն Ստեփաննոս Իմաստասէր Սիւնեցու(²²) ձեռքով, ոչ շուտ քան 8րդ դարը:

Եղանակները ձայնագրելու, ազաւազումից փրկելու, կորստից ազատելու հարցը նայապէս շատ հին է. ինչպէս բոլոր քրիստոնեայ երկրներում, այնպէս էլ մեզ մօտ եկեղեցին ԵնվամՅԵՐԻ, կամ՝ ինչպէս հայերս էինք նոստիմն ասում, խաղտի սոստեմն է ընտրել իւր եղանակները ձայնագրելու համար: Երաժշտական խաղտը բերել է արեւմտագրից՝ իմա Փոքր Ասիայից կամ Յունաստանից, ըստ կիրակոս Գանձակեցու հաստատ վկայութեան Խաչատուր Տարսնեցին 12րդ դարում և ամենայն հաւանականութեամբ ինքն էլ ձայնագրել, խաղաւորել տմբողջ շարականը, որի համար էլ մեծ հոշակ է ստացել ժամանակակիցների առաջ իր սերածշտական արուեստովը:

Այնուհետև ինչպէս ամէն տեղ, այնպէս էլ մեզ մօտ այդ խաղտի նշանակութիւնը ժամանակի ընթացքում ազաւազում եւ ապա մոտացութեան է դատապարտուած, այնպէս որ զեռ 17րդ դարի սկզբներին արդէն ոչ ոք չէր կարողանում դրանց նշանակութիւնը բացատրել, բացի երկարման նշանից: Եկեղեցական երաժշտութիւնը էլի կորստուին եւ աղաւաղման էր դատապարտուած, հարկաւոր էր մի նոր հնար գտնել:

1818 թ.ին Կ. Պոլսում յոյները ժողով են գումարում և որոշում գրութեան մի նոր սիստեմ մտցնել եկեղեցու մէջ. նրանք ընտրեցին գոյութիւն ունեցող 64 հին խաղտի ձեւերից 20ը և առին նրանք բարձրակին նոր՝ հնի հետ առնչութիւն չունեցող նշանակութիւն:

Այդ ղէպքը, որ Կ. Պոլսի պատրիարքի և ամիրանների առաջ էր կատարուել, խլթան դարձաւ հայ հոգեւորականութեան համար իրենց երաժշտութեան մասին եւս փոքր ինչ մտածելու: Յայնի Նիսիտուրթիումը Համբարձում Բարսն առաջին կողմում ճայակական ձայնագրութիւնը հնարեց. նա նայապէս վերցրեց մեր հին խաղտից 20 հատ եւ ստուռ ուրոյն նշանակութիւն. իսկ Կէտրդ Գ.ը, երբ կաթուղիկոս դարձաւ եւ Պոլսից էլմիտմիին եկաւ, բերել տուեց Պոլսից ձայնագրապետ Ն. Թաչճեանին եւ ձայնագրել ու ապագրել տուեց մինչև 1875 թիւն ամբողջ շարականը, ժամագրքը և պատարագը:

(²) Այս երկու հարցի մանրամասն ուսումնասիրութիւնը տես իմ «Յունական ազգեութիւնը հայ երաժշտութեան տեսական վրայ» գրքում:
 (²²) Որի քոյր Սահակաւազուղտը նայ իսկ «Երջ հետ» էր երաժշտական արհեստին և ինքեջով վարագործին նոստիմն ուսուցանէր զբազումս: և շատ մեղեկներ յօրինում քաղցր եղանակով: (Ստեփ. Օրբելեան, Գլ. Լ):

Այս սիւստեմը փաստօրէն երկար կեանք չունեցաւ. բայց վերոյիշեալ գրքերից տւայուցելն էլ մի քանի երգարաններն և դասագրքերն և՛ գրանով էլ նրա դերը համարեալ՝ վերջացաւ, որովհետեւ բազմաձայն երաժշտութիւնը, որն արտայայտուող համար սոսկական» կոչուած սիւստեմը շատ անյարմարութիւններ ունէր, իր հետ բերեց 19րդ դարի վերջերին նա՛ն համաշխարհային դարձած էւրոպական նոտագրութեան սիւստեմը:

Մ'րգ, ի՞նչ է ներկայացնում իրենից այդ «հոգեւոր» կոչուած երաժշտութիւնը, որը 4-օրդ դարերում սկիզբն առնելով, իշխող դեր է ունեցել մեր ամբողջ միջնադարեան կուլտուրական կեանքում և՛ մինչև 70-ական թուականները աւանդաբար, իսկ նրանից յետոյ էլ հայկական նոտաներով իր գոյութիւնը պահել է մինչև այսօր:

Նախ նկատենք, որ դիտում ենք այդ «հոգեւոր» երաժշտութիւնը իբրև պատմական մի դոկումենտ միջնադարը նիւթապէս մեր գիտակցութեան մէջ զգալի և շոշափելի դարձնելու համար: Եթէ նա գործածական է մնացել այսօր մի երկու տասնհոկ վանականների և ընդգրկներով մէջ միայն, այդ հենց ա՛յն զլլաբոր փաստն է, որ այդ երաժշտութիւնը մեր վերակառուցուող կեանքում արդէն ա՛յ մի անելիք չունէր և հոկտեմբերեան աւելով արխիւը պիտի նետուէր այդ նոյն միջնադարի կուլտուրական միւս մնացորդների հետ միասին:

Իբրև այդպիսին այդ դոկումենտը ամբողջական չէ: Մեր կուլտուրան դարերի ընթացքում միշտ էլ բաժանուած է եղել արևելեանի և արևմտեանի՝ պարսկական-բիւզանդական, պարսկական-տաճկական, ռուսական-տաճկական: 70 ական թուականներին ձայնագրել տուած վարիանտը Կ. Պոլսի հայկական եկեղեցական եղանակներն են, որոնք գտնուում են ամսիջապէս բիւզանդական եկեղեցական երգի և տաճկական եղանակների զօրեղ ազդեցութեան տակ. այդ եղանակներն այնքան տարբեր էին արևելեան հայութեան, այս դէպքում էջմիածնի եղանակներից, որ Գեորգ Դ. ն ստիպուած էր որոշ բունութիւններ գործնելով միայն այդ եղանակները գործա-

ծական դարձնել հենց էջմիածնում (*), ինչքան էլ ամբողջական չէ, սակայն՝ քանի որ չունենք ուրիշ գրաւոր աղբիւր, թաճեանի ձայնագրածը դառնում է միակը, որով այնու ամենայնիւ զաղափար ենք կապում միջնադարի իշխող դասակարգի՝ հոգեւոր ֆէոդալների երաժշտական կուլտուրայի մասին:

Նախ ընդհանուր դիտողութիւն. ամբողջ միջնադարում չկայ մի որ եւ է երեւոյթ բիւզանդական եկեղեցական երաժշտութեան մէջ, որ իր արձագանգը գտած չլինի Հայաստանում կա՛մ անմիջապէս, կա՛մ մի 50 տարի յետոյ: Արդէն վերջ յիշատակելիքը գումամաների՝ ո՛ր թը ձայների, նեղմաների և նոր նոտագրութիւնների մասին: Մեր հոգեւոր երգը ևս ունի զարգացման նոյն էտապները, ինչ որ բիւզանդականը:

Բիւզանդականի ասօլին էտապը ևս մայնակն էրգն է, երբ երգը ունիտն խումբակն է՝ համայնքն է երգողը, տեքստի ամէն մի վտնկը զիտաւորապէս ունի մի ձայն և եղանակը կարող է երկարիլ այնքան, ինչքան ըսողը կը շատանայ. տալու չափական սիմետրիա չկայ, ո՛րիմը միայր, տեղութեան մը հաւասար նոտաներով մինչև կազմանները, երբ վերջին նոտան երկարացնել կարող էին եւ չունչ աւանել:

Երկրորդ էտապը մնեցրգն է. բիւզանդականում, ինչպէս և արևմտեան եկեղեցում համայնական երգի վերջին վանկն ու ձայնը հետագայում զարգացում դառնում են սօջ եղանակներ իւրիւրիւրիւր, ապա սեփական առուներով, առանց բառի, որոնք մէջ երգիչը իր վերտուող տխրելիայով իր կրօնական էքստասիս էր հասնում: Իայդ եկեղեցում զեկալմար հայրերը, վտանգ տեսնելով այդ պատ՝ ինստրու-մէնտայ պոպիլուների մէջ, կապում են այդ եղանակները նոր հոգեւոր խօսքերի հետ և դարձնում անկախ սօջ համարներ պրօզա (prosa) անուանով, որ բառացի նշանակում է սէքվենցիայի փոխարէն (pro sequentia): Prosa՛ մէջ իշխողը մէլիլզմն է, զարգարոււն եղանակը:

(*) էջմիածնի եղանակներից փաստօրէն մի երկու համար է մնացել Մակար Նիմալեանի բազմաձայն պատարագի մէջ:

Վերջապէս բիւզանդական եկեղեցին նուազարան և նուազական երաժշտութիւն չի ընդունում եւ բազմաձայնի հակառակորդ է հանդիսանում մինչև 19րդ դարի վերջերս:

Նոյն պատկերն է և մեզ մօտ: Մեր եկեղեցական երգի⁹10 մասը համայնական, խմբական ունիստօ երգն է, նոյն բիւզանդական դամմաների վրայ և նոյն կոմպոզիցիական օրէնքներով յօրինուած, այն աստիճանի բիւզանդականին նման, որ եթէ բառերը երկուսիցն էլ հետացնենք, չենք կարող որոշիլ, որն է բիւզանդականը, որը հայկականը: Այդ զէպքուժ բացառութիւն չի կազմում միայն մեր համայնական երգը. այդպէս է և բուսական եկեղեցական համայնական երգը և կանաները մինչև 17րդ դարը. այդ նոյն դրութեան մէջ են փաստօրէն բոլոր հին եկեղեցիների համայնական երգերը, մի երևոյթ, որ բացարձակ է անշուշտ նրանով, որ եկեղեցին աստուածամանչի եւ աւետարանի հետ տուել է բոլոր ազգերին էլ մի նոր արհեստական երգեցողութեան զոգմատիկ ձև, որն իր ասկետիզմով ժխտել է ուրիշ, սիմետրիա, ձայների համարձակ թորչք, ականջը շույտ մկտոյիս... էլէմէնտներ, որոնք յատուկ էին աշխարհիկ, այս զէպքում հետնուս երաժշտութեանը:

Եթէ իուրիւրացիաների եւ սէքվէնտների հետքերը խազաւորուած ձեւապիւր շարականներում կարելի է գտնել, սակայն այժմեան գործածական շարականի մէջ նւրբանք քիչ են գործածական: Բայց դրանց փոխարէն զարգացած, ցայտուն ձեւի է հասել prosa-ն, ստեղի, տաղ, գանձ, մեղեդի և սրբաստուութիւն անուններով: Դրանք այն սօջ համարներն են, որոնք կրթապարտիկ են գալիս եկեղեցական ծիսակատարութիւնների ժամանակ, ամենահնդիսաւոր մոմիւնտներին: Դրանք արարական՝ առհասարակ արեւելեան երաժշտութեան ընդհանուր կնիքն ունին իրենց վրայ եւ իրեւ այդպիսիները կլասիկ արուեստի մեծ արժէքներ են ներկայացնում: Այս մեներգների մէջ խօսքը երկրորդական է, ոչ երգողն է զգում նրա ներկայութիւնը, ոչ լսողը. կազմուած է յաճախ մէկ, երկու նախադասութիւնից և կարծես ծառայում է միայն նրա համար, որ այդ

իրօք ինտրուձէնտալ մեկոյիսները երգուելու հնարաւորութիւն ստանան:

Ինչքան համայնական երգը ապագային է եւ եկեղեցական զոգմատիզմի արդիւնք, այնքան այս սօջ մեկոյիսները ընդհանուր արեւելեան են եւ զ' սպեցե-Փիկ եկեղեցական: Միջնադարում նրանք կարող էին նոյն չափով և աշխարհիկ համարուել, մանաւանդ որ հենց եւրոպական կուլտուրական երաժշտութեան մէջ երկար ժամանակ՝ նոյն իսկ Բախի և Հենդէլի շրջանում, դժուար էր աշխարհիկը եկեղեցականինց տարբերիլ — այնքան աշխարհիկը եկեղեցականին ազդեցութեան տակ էր գեւ: Պօսքով եկեղեցական, բայց միտոյիսով ինտրուձէնտալ ազատ սօճի ոլորտը թեւակոխած այս երաժշտութիւնը միջնադարեան Ֆէօդալի (ուզում է աշխարհական լինի, թէ հոգեւորական) պօքֆէօզն է, որից զէնը այլևս չկարողացաւ անցնել հետագայում, նոյն իսկ մինչև քսաներորդ դարը: Մի միջին ձև էլ կայ մեր հոգեոր երաժշտութեան մէջ, կից համայնական՝ խմբական պարզ երգը զտով ծանրացնում են հանդիսաւոր օրերի համար, քառորդ նոտաները արհեստականօրէն տանովեցեւորական նոտաների բաժանելով. օրանք պտոսական տրբայուների անձարակ սլաւապատութիւններն են, վերջին անկումնային շրջանի արդիւնք, որոնք կարող էին ամենեւին չձայնագրուել:

Երկար ժամանակ մեր մանր ըուրժուական միջավայրում, հոգեւորական թէ՛ աշխարհական օրօրում էին այն զգացումով եւ համոզմունքով, թէ մեր եկեղեցական երաժշտութիւնը ամբողջովին ազգային ինքնուրոյն ստեղծարարութիւն է, միջնադարից մեզ աւանդ մնացած: Նոյն իսկ եղան մարդիկ, որ յայտարարում էին կրթապարտիկ եւ զրուժ, իրբեւ գիտական հետազօտութիւնների արդիւնք, թէ մեր եկեղեցական համայնական երգերը եղել են սկզբնապէս հայ ժողովրդական երգի, որոնք եկեղեցու համամատարաբար պատգալուկում հետազայում աւելի զարգացան եւ վեհ ու փառաւոր կերպարանք ստացան, մինչդեռ ուամիկ ժողովուրդը մշատեւ արհաւիրքների մէջ իւր երգը ճպմուած եւ նախնական դրութեան մէջ թողից:

Սակայն 1912 թուից արդէն կար եւ

մի ուրիշ հակոտնեայ կարծիք, որը գիտական հետազոտութիւնների հիման վրայ(*) պնդում էր, որ եկեղեցականի եւ ժողովրդականի միջև նկատուող նմանութիւններից պէտք է բացատրել նրանով, որ եկեղեցական երաժշտութիւնն է ազդողը ժողովրդական ստեղծագործութեան վրայ, ճիշդ այնպէս, ինչպէս միջնադարեան կլորնական միստիկ կեանքը գեղարուեստի մնացած բոլոր ճիւղերի վրայ(**):

Այսօր եւս, երբ ժողովրդական երգի բաւականին խոշոր գրականութիւն կայ հաւաքուած և նրա ղեմքը աւելի է պարզաբանուած, պէտք է աւել, որ եկեղեցական համայնական երգի եւ ժողովրդական երգի մէջ ո՛չ մի նմանութիւն չկայ, ո՛չ գումամանրի, ո՛չ ոխթմի, ո՛չ էն է կղանակների յորինման օրէնքների տեսակէտից(***)։ Իսկ եկեղեցական մեներգները նոյն չափ ընդհանուր արեւելեան են, որչափ էսօրուայ ուսուցը, սիգուը, կամ չարգեանը։

Միակ նմանութեան տպագրութիւն թողնող ֆակտորը արեւելեան սեքսյադրի (1|2 + 1' |2 + 1|2) գոյութիւնն է թէ՛ եկեղեցականի մէջ եւ թէ՛ ժողովրդականի մէջ։ Այս ա՛յն արաբական տետրախորդն է, որ արաբական սրի հետ մտել է և՛ եւրոպական ազգերի երաժշտութեան մէջ և՛ ասիական ազգերի ժողովրդական երաժշտութեան մէջ։ Եթէ եւրոպացին այդ տետրախորդի մէջ է ամփոփում ամբողջ արեւելքի երաժշտութիւնը, մենք արեւելքի ներս, որ աւելի մօտիկից պիտի ճանաչենք արեւելքի երաժշտութիւնը, աւելի զգոյշ և աչառուի՞ մօտեցում պիտի ունենանք ղէպի մեր երաժշտական խնդիրները։ Այդ նոյն արեւելեան տետրախորդը՝ համեմատած միւս տետրախորդերի հետ, ամէնէն պիտի է գործածական մեր ժողովրդական երգի մէջ։ 1000 երգի մէջ հազիւ գտնենք 30-35 զուտ ժողովրդական երգ, որ այդ տետրախորդի վրայ յօրինուած լինի(****)։

Չարմանալի կերպով հենց այդ տետրախորդով յօրինուած երգերն էլ զլխաւորապէս ժողովրդական կեանքի ա՛յն մասնատների հետ են կապուած, որոնք կրօնական ծիսակատարութեան, կրօնական երկիւղածութեան էլէլմէնտներ են պարունակում իրենց մէջ կամ նոյն իսկ երգիծանք ղէպի հոգեւորականի անձնաւորութիւնը։ Իսկ այդպիսի մասնատների կան ի հարկէ մեր ժողովրդական երգի մէջ. աշխատանքի երգերից օրինակ հոտովեները, երբ հողագործը գուժեանք քշելուց սառալ ղև, մի աստծու անունն է տալիս, որը նրա կարծիքով նրա թափած քրտինքի տէրն ու հատուցողն է, մի սովորութիւն որ յատուկ է նոյն իսկ կապաշտական շրջանին, հարսանիքի որոշ մոմէնտեր, ծննդեան և մկրտութեան ծէսերը և այլն։

Սակայն այս բոլորը ասում են հենց այն, որ նոյն իսկ այդ արեւելեան տետրախորդը եկեղեցական երգի միջոցով է մտել ժողովրդական երգի մէջ և որ ո՛չ մի փաստ չունենք եկեղեցականը ժողովրդականից ծննդեցու և նրան ազգային երաժշտութիւն դարձնելու։

Ծանօթութիւն. — Այս ուսումնասիրութիւնը, նոյնութեամբ, միայն արեւելեան արդի ուղղագրութիւնը արեւմտեանին վերածելով, արսատպած ենք ողբայեալ մեծ երաժշտաբան Սպիրիդոն Մելիքեանի «Ուրուզիմ հայ երաժշտութեան նորատպ հատորն», զոր 2ՍԽ2 ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍԱՏ հրատարակած է Երևան, Մելիքեան ֆոնտի շարքին մէջ։

Այդ կարեւոր եւ մասնագիտական խոր հմտութեամբ հրատարակած ուսումնասիրութեան միւս զլուխներն են. Առաջաբան, I. Վիպական երգեր, II. Լիթիական երգեր (գուսաններ, տաղերգուներ, աշուղներ), III. Եկեղեցական երգ, IV. Ժողովրդական երգ (խաղ, երգ, պարերգեր), V. Քաղցամայն երաժշտութեան շրջան, VI. Մտածական իլլուստրացիա։

Գրքին մեծութիւնն է 4^o. Ազգիկ թուղթի վրայ մաքուր տիպ. էջք 89, զինը 8 Ուսպիկ։

Սիրով կը յանձնարարենք այս հատորը հայ եւ լատշտութեանը գրադոգ բոլոր ազգայիններուն։

(*) Տե՛ս՝ «Յունական ազգեցութիւնը հայ երաժշտութեան տեսականի վրայ» Սպ. Մելիքեան, սպ. 1914 թիւ։
 (***) Տե՛ս՝ նոյն գիրքը, Երես 60։
 (****) Տե՛ս՝ «Հայ ժողովրդական երգի գումամաները» Սպ. Մելիքեանի։
 (*****) Տե՛ս՝ «Հայ ժողովրդական երգի գումամաները», Երես 27, Սպ. Մելիքեանի։

